

9924

6297.

# ԱՆԱԹՈՒԼԻԱ ԳՈՒԼԵՃ

ՄԱՐԶՈՒԱՆ

—•••••—


ՀԱՄԱՌՕՏ  
ՅԱՅՏԱԳԻՐ  
1914


—•••••—

ՄԱՐԶՈՒԱՆ

Տպգր. ԱՆԱԹՈՒԼԻԱ (Յակոբ Մ. Մապեան)

1914





ՄԱՏԵՆԱԴՐԱՐԱՆ - ՔԱՆԳՐԱՆ

# ԱՆԱԹՈՒԽ ԳՈՒԼԵՃ

ՄԱՐԶՈՒԱՆ

ՀԱՄԱՌՕՏ

ՅԱՅՏԱԳԻՐ

1 914

Մարզուան

Տպագր. «Անաթոլիա» Յակոբ Մ. Սրապեան  
1914

**Օ Ր Ա Յ Ո Յ Ց**

**1914-15 ԴՊՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ**

1914-15 Դպրացական տարւոյ ամսվերջի եօթնեակը կը տեւէ 13-19 Յունիս :

Ամառուան արձակուրդը կ'սկսի 20 Յունիս և կը տեւէ մինչեւ 15 Սեպտ. 1914 :

Գոլէճը կը բացուի Սեպտեմբերի երրորդ Զորեքշարթի օրը . ճաշարանը և ննջարանները նախընթաց Շաբաթ օրը արդէն բացուած կ'ըլլան :

Զմառուան արձակուրդը կ'սկսի Յունաց Ծրնունդին նախընթաց օրը և կը լրանայ Հայոց Ծրնունդին յաջորդ օրը :

Զատիկի արձակուրդը կ'սկսի Աւագ Հինգշաբթի օրը և կը լրանայ Նոր Կիւրակէի իրիկունը :

Աւարտական հանդէսը տեղի կ'ունենայ 23 Յունիս , 1915 :

Թուակառները Նոր Տոմարի համեմատ նշանակուած են :

**Դ Ի Ր Ք**

**ԵՒ**

**ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ**

**ԿԱՆԵԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ**

Անաթոլիա Գոլէճը հաստատուած է Մարպուտի հիւսիսային նզերքը՝ ծովու մակերեսէն 750 մետր բարձր : Սամսոնէ հեռաւորութիւնը մօտաւորապէս 100 կիլոմետր է : օտէն կ'անցնին ինքնաշարժ (automobile) կառքի և չողեկառքի զոյգ ուղիները .

որոնք կառուցուելու վրայ են, և կ'երկարին նա-  
ւահանդիսաւն զէպի ներսերը: Կլիման խիստ առող-  
ջարար է:

Անաթոլիա Հիւանդանոցը սերտիւ կապուած է  
Գոլէճիս հետ, այնպէս որ ուսանողները ձրի կը վա-  
յելեն բժշկական հսկողութիւն և խնամք՝ իրենց  
վրայ ըլլալով միայն զեղերու և վիրաբուժական  
գործողութեան սովորական ծախքը:

#### ՄՈՒՏԻՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Գոլէճս մտնելու համար ուսանող մը լման 12  
տարեկան ըլլալու է. պարտի ծանօթ ըլլալ իր մայ-  
րենի լեզուով կարգաւ գրելու, ինչպէս նաեւ թուա-  
բանութեան և աշխարհագրութեան տարրական գի-  
տելիքներուն: Օսմ. հպատակներէ քննութիւն կը  
պահանջուի տարրական թուրքերէնի մէջ:

Ամեն ուսանող պարտի ներկայացնել ընձիւ նը-  
կադարի վէպական մը՝ ստորագրուած ծանօթ պա-  
տասխանատու անձէ մը, որ յաւէտ ներկայացնէ  
ուսանողին վերջին անգամ յաճախած վարժարանը:

#### ՏԱՐԵԹՈՇԱԿ ԵՒԱՅԼՆ

Գլխերօթիկ ուսանողներու տարեթոշակն է 18  
օսմ. լիրա, որուն 10 լիրան վճարելի է Գոլէճի տա-  
րեակի գրին՝ Սեպտեմբերի մէջ. իսկ մնացեալ 8 լի-  
րան՝ Փետրուարի առաջին շաբթուն: Բայց 1914-15

դպրոցական տարիէն սկսեալ ամեն ուսանող իր  
արձանագրուած ատենը պարտի 1 օսմ. լիրայի կան-  
խավճար մը ընել. սոյն գումարը սպա իր տարե-  
թոշակին պիտի հաշուուի՝ պայմանով որ դպրոցա-  
կան տարւոյ առաջին Շաբաթ օրը ներկայ ըլլայ  
Գոլէճիս մէջ. եթէ ոչ՝ պիտի սուժէ այդ գումարը:

Սոյն 18 օսմ. լիրա տարեթոշակին փոխարէն՝  
Գոլէճս կը հայթայթէ ամեն գլխերօթիկ ուսանողի  
դասագինը, ճաշագինը, ննջարանը, լուացքն ու  
բաղնիքը: Ուսանողին կը պատկանին իր հանդեր-  
ձեղէնի, գիրքերու և անձնական ծախքերը: Այն  
պարագային երբ դպրոցական տարւոյ քնթացքին  
մէջ ուսանող մը մեկնի Գոլէճէս, ձգած կրտսմնայ  
չրջանին դասագինը՝ 2 օսմ. լիրա, և ձգած ամսուն  
ճաշագինը և յարակից ծախքերու փոխարէնը զեղ-  
ջընելով՝ մնացեալը իրեն կը վերադարձուի:

Ամեն ուսանող կրնայ որեւէ ժամանակ ձգել  
Գոլէճս՝ պայմանով որ ներկայացնէ իր ծնողքէն և  
կամ պաշտպանէն ստորագրուած թուրքուութեան  
նամակ մը՝ ուղղուած Հաստատութեան նախա-  
գահին:

#### ԻՆԲԵՆՏԻՒԹԵԱՆ (Self Help) ԲԱԺԻՆԸ

Գոլէճս ունի ինքնօգնութեան բաժին մը. սոյն  
բաժինը գործ կը հայթայթէ սահմանափակ թիւով  
աղքատիկ ուսանողներու, որոնք չեն կրնար զբա-  
մապէս վճարել իրենց ամբողջական տարեթոշակը.  
այսպիսիներ կրնան աշխատիլ Կահագործարանի և

Կազմատան մէջ, սեղանի սպասարկել, սենեակներու և սրահներու հոգ տանիլ, ննջարաններու մէջ հսկողի դեր կատարել՝ հանգերձ ուրիշ պատահական պարտականութիւններով: Ժրաջան ուսանողներ այս կերպով կրնան չանիլ տարեկան 2—5 օսմ. լիրա: Ինքնօգնութեան բաժնէն կրնան օգտուիլ միայն անոնք, որ իրենց դասերուն մէջ վաղուէն և ընտիր վարքութեամբի տէր են:

#### ԳՆՈՒԱՀԱՍՆԵՐՈՒ ՅԱՐԿԸ

Քսան տարի առաջ 12-15 տարեկան տղոց բրնակութեան յատուկ զատ Յարկ մը (Home) մը բացուեցաւ. 1913ին ծախուեցաւ այդ շէնքը: Այժմ, Մայիս. 1914, նոր շէնք մը կառուցուելու վրայ է, ուր՝ կը յուսանք թէ յառաջիկայ Սեպտեմբերին պիտի կարենանք տեղաւորել 50 զեռահաս տղաք: Կը յուսանք որ սոյն յարկարաժնին ընդարձակութիւնը ժամանակի ընթացքին մէջ պիտի կրկնապատկուի: Մոյն Յարկին մէջ բնակող զեռահաս տղոց կը տրուի նոյն դաստիարակութիւնը, զոր կ'ստանան Գոլէճի շէնքին մէջ բնակող միւս ուսանողները՝ սա տարբերութեամբ որ առաջինները կը վայելն սերտ հսկողութիւնն ու խնամքը Տէր և Տիկին Կեչըլի և իրենց օգնականներուն: Սոյնպիսի հոգածութեան ներքեւ ուսանողները կը վայելն առաւելութիւնը այն կեանքին, որ կը յատկանշէ ռատարող, քրիստոնեայ ընտանեկան յարկը:

#### ԿԱՆՈՆՆԵՐ

Ուսանողները պարտին ամեն ատեն և ամեն տեղ ազնիւ, մարդավայել վարմունք ունենալ. պարտին հնազանդիլ Հաստատութեանս կանոններուն որոնք կը զեկույուին ուսանող մարմինն: Շարաթ և արձակուրդի օրերը կրնան առանց մասնաւոր հրամանի քաղաք իջնել. ուրիշ առթիւ պարտին մասնաւոր հրաման առնել կա՛մ Դեր նախագահէն և կա՛մ Տեսչէն:

Ծխախոտի և ոգելից ըմպելիներու գործածութիւնը արգիւտած է: Որեւիցէ ուսանողի ստորին և անվայել ընթացքը կրնայ սրելիցէ ժամանակ կրթանքի ենթարկել զինքը. իսկ մեղապարտ բնթացքի պարագային՝ որեւիցէ ատեն կրնայ վտարուիլ Հաստատութենէս:

#### ԿՐՕՆԱԿԱՆ ՍԿՋՐՈՒՆԲՆԵՐ

Գոլէճս իրրեւ կրօնական հիմք ունի Աւետարանական Քրիստոնէութեան սկզբունքները, սակայն չծառայեր յարանուանական պրոպագանդայի: Ամեն ուսանող շաբաթը երկու պահ Ս. Գրոց դաս կ'ունենանայ. ամեն առաւօտ՝ դասախօսութեանց սկսելէ առաջ ներկայ կը գտնուի առօրեայ բացման աղօթքին, ինչպէս նաեւ ամեն Կիրակէ իրիկուն՝ քարոզի պաշտամունքին. ամեն ուսանող ազատ է և կը յանձնարարուի Կիրակէ առաւելները երթալ քաղաքին մէջ իր նախընտրած եկեղեցին: Զանազան

յարանուանութեանց դաւանող ուսանողներ կրնան  
յարմար ատեններ հրաման առնել ներկայ գտնուե-  
լու իրենց պատկանած սրբավայրերուն մէջ :

### ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաստատութիւնս կարգ մը առաւելութիւններ  
ևս կ'ընծայէ ուսանողութեան : Զմեռուան եղա-  
նակին՝ Ուրբաթ իրիկունները շաբթ մը բանախօսու-  
թիւններ կը արուին : Ուսանողները իրենց միու-  
թիւնները ունին : Հայ ուսանողները կ'անդամակ-  
ցին «Շաւարչան»ի , որ կը հրատարակէ «Նոր Այգ»  
ամսեայ հանդէսը , խնամք կը տանի գրական , ե-  
րաժշտական և մարմնակրթանքի զարգացման :

Գոյէճս ունի բմբջխաղերու յատուկ ընդար-  
ձակ հրապարակ մը՝ քառորդ մղոննոց արշաւուղիով ,  
foot-ballի և basket-ballի գիտիչներով , կան պատե-  
հութիւններ նաև ուրիշ խաղերու և մարմնակրթա-  
կան զբօսանքերու :

Գոյէճս պատեհութիւն կ'ընծայէ երաժշտութիւնը  
մշակելու . ուսանողները շաբաթը երկու պահ՝ եր-  
գելու վարժութիւն կ'ընեն . կայ նաև նուագա-  
խումբ մը : Յաճախ կը կազմուին երաժշտախմբակ-  
ներ ալ , որ թէ՛ իրենք կ'օգտուին և թէ՛ զանազան  
առիթներով զուարճութիւն կ'ընծայեն ուրիշներուն :

Ուսանողները մեծապէս կը գնահատեն նոր Ըն-  
թերցատունը , որ զանազան լեզուներով երեսուն լը-  
րագիրներ և պարբերականներ ունի : Յառաջիկայ  
գպրոցական տարեակիցին կը բացուի նոր Մատե-

նադարանը , ուր ուսանողները աւելի մեծ գիւրու-  
թիւններ պիտի վայելին գործածելու այժմու վեց հա-  
զար հատորները , որոնց վրայ ամեն տարի կարեւոր  
յաւելումներ կ'ըլլան :

### ՓՈՒԹԱՅԷՔ

Յաճախ կ'սխալուինք մերձեղ զինուկները , քան-  
զի երբեմն ծնողներ կամ պաշտպաններ յայտնի  
կը գտնուին իրենց զաւակներուն կամ պաշտպանու-  
կներուն անունները կանխաւ արձանագրել տալու միջ-  
ովնէր որ անոնք զինեմն՝ արդէն գրաւուած կ'ըլլան  
Հաստատութեան քոյր տնակարէի տեղերը , եւ անս'  
կ'սխալուինք ընել սա դառն յայտարարութիւնը . «Ուշ  
է , շահ ուշ» :

Ուսանողներու մասին քոյր քրտակցութիւնները  
կ'ուղղորդին վարի հասցեին .

مرزیه و نده آمریه

REV. G. E. WHITE, D. D.  
President of Anatolia College,  
Marsovan.

ՎԵՐ. ՏՐ. ՀՈՒԱՅԹ,  
Նախագահ Անաթոլիա Գոյէճի.  
Մարզուան :

# ՈՒՍՄԱՆՑ ՅԱՅՏԱԳԻՐ

## ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ

### ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ

- ԱՆԳԼԻԵՐԵՆ.— Բերական, Ա. լնթերցարան, Բ. լնթերցարան 5(\*)  
 ՀԱՅԵՐԵՆ.— Տարբական Բերականութիւն Գաղանճեանի, Գ.  
 Մայրենի Լեզու Մ. Պոնտացիի 5  
 ԹՈՒՐԿԵՐԵՆ.— Րահնիւմի Գրաւթ (Ա. և Բ. մասերը, Րի-  
 քալը Լէթայիֆ) 4  
 ՈՒՍՈՂՈՒԹԻԻՆ.— Գրաւթ Թուաբանութիւն Գ. և Դ տարի 4  
 ԳԻՏԱԿԱՆ.— Տարբական Աշխարհագրութիւն Խաչկոնցի 3  
 Ս. Գիրք 2. Գրաւթութիւն 3. Զայնական Երա-  
 ժըշտութիւն 1

### ԵՐԵՐՈՐԴԻ ԿԱՐԳ

- ԱՆԳԼԻԵՐԵՆ.— Գ. Անթերցարան (3), Թարգմանութիւն (2)  
 և Դ. լնթերցարանի մէկ չորրորդ մասը (3) 5  
 ՀԱՅԵՐԵՆ.— Գաղանճեանի Բ. և Դ. տարի Բերականութիւ-  
 նը, Զ. Աստուրի Թանգարանը, (բարձրագոյն) 5  
 ԹՈՒՐԿԵՐԵՆ.— Բ. Գրաւթ, Մուխթասար Սարֆ (Ա. և Բ.  
 մասերը)  
 ՈՒՍՈՂՈՒԹԻԻՆ.— Գրաւթ Թուաբանութիւն Գաղանճեանի  
 Ե. և Զ. տարի 4  
 ԳԻՏԱԿԱՆ.— Աշխարհագրութիւն (միջին), Աշխարհագրութիւն  
 (բարձրագոյն) 3  
 Ս. Գիրք 2. Գրաւթութիւն 3. Զայնական Երա-  
 ժըշտութիւն 1

(\*) Յայտագրիս մէջ նշանակուած թիւերը շարաթական դա-  
 ւապատահերը կը յատկեն:

**ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳ**

- ԱՆԳԼԻԵՐԵՆ.— Դ. Ընթերցարանը կը լրանայ, 15 էջ Պատմական Ընթերցարանէն, Ե. Ընթերցարանի մէկ չորրորդ մասը, Գիտական Ընթերցարանը կը լրանայ, Գերականութեան առաջին 60 էջերը 5
- ՀԱՅԵՐԵՆ.— Գաղանձեանի Բ. և Դ. տարի Գերականութիւնը կը շարունակուի, Խաչկոնցի Հայոց Պատմութիւնը (Ա. տարի) Գանձարան (բարձրագոյն) 4
- ԹՈՒՐԿԵՐԵՆ.— Թուրքերէն Գերականութեան Դ. տարին, Օսմ. Գերականութիւն և Համաձայնութիւն, Կիւլտէսթէ 3
- ԳԱՂՂԻԵՐԵՆ.— Ալկէի մեթոտին Ա. տարին 3
- ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ.— Առեւտրական Թուարանութիւն, Տոմարակալութիւն 4
- Ս. Գիրք 2, Գծագրութիւն 3. Զայնական երաժշտութիւն 1

**ԵՆՐԱԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ (Sub Freshman) ԿԱՐԳ**

- ԱՆԳԼԻԵՐԵՆ.— Պատմական Ընթերցարանը և Գերականութիւնը կը լրանան 5
- ՀԱՅԵՐԵՆ.— Գաղանձեանի Գերականութեան Լրացուցիչ ընթացքը, Խաչկոնցի Հայոց Պատմութիւնը (միջին), Մեղրագետ (բարձրագոյն) 4
- ԹՈՒՐԿԵՐԵՆ.— Դրամթ և Կիւլտէսթի Բ. մասը 3
- ԳԱՂՂԻԵՐԵՆ.— Լարիվէ Յիւթիթ Տարրական Գերականութիւնը, Կիւլյօի Մանկանց Ընթերցարանը 3
- ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ.— Դրահաշիւ 4
- ԳԻՏԱԿԱՆ.— Բնախօսութիւն, Բնական Աշխարհագրութիւն 3
- Ս. Գիրք 2

**ԳՈԼԷՃԻ ԸՆԹԱՅԲ**

**ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ (Freshman) ԿԱՐԳ**

- ԱՆԳԼԻԵՐԵՆ.— Ծաղկաքաղ մասնաւորաբար Ե. Ընթերցարանէն, Շարադրական վարժութիւններ 3
- ՀԱՅԵՐԵՆ.— Դրարար Գերականութիւն, Ընթացք ի զրոյց բարբառ (Ա. և Բ. մասերը) Շարադրական վարժութիւններ (աշխարհաբար) 3
- ԹՈՒՐԿԵՐԵՆ.— Թուրքերէն Գերականութեան Ե. տարին 4
- ԳԱՂՂԻԵՐԵՆ.— Լարիվէ Յիւթիթ Գերականութեան Ա. տարին, Կիւլյօի տարրական Ընթերցարանը 3
- ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ.— Երկրաչափութիւն 4
- ԳԻՏԱԿԱՆ.— Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն 3
- Հին Ազգաց Պատմութիւն (անգլ.) 3
- Ս. Գիրք 2

**ԿՐՏՍԵՐ (Sophomore) ԿԱՐԳ**


- ԱՆԳԼԻԵՐԵՆ.— Դրադիտութիւն, Շարադրական վարժութիւններ 3
- ՀԱՅԵՐԵՆ.— Ծաղկաքաղ (Ա. մասը), Տաղաչափութիւն, Ծաղկաքաղ (Բ. մասը) 3
- ԹՈՒՐԿԵՐԵՆ.— Օսմաներէն Գիթապէթ, Գովանդինի մէտէնէյէ 3
- ԳԱՂՂԻԵՐԵՆ.— Լարիվէ Յիւթիթ Գերականութեան Բ. տարին, Կիւլյօի Ա. Ընթերցարանը 3
- ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ.— Եռանկիւնաչափութիւն, Անդաչափութիւն 3
- ԳԻՏԱԿԱՆ.— Բնագիտութիւն 5
- Միջին ազգաց պատմութիւն 2. Ս. Գիրք 2

**ԵՐԷՅ (Junior) ԿԱՐԳ**

- ԱՆԳԼԻԻՆԵՐԷՆ. — Պատմութիւն Անգլիական Գրականութեան 3  
ՀԱՅՅԵՐԷՆ. — Բուրաստանք, Հայ և Յոյն Դիցարանութիւն.  
Ընդլայնումներ և ամփոփոյքներ, Յօդուածագրական վար-  
ժութիւններ (աշխարհարար) 4  
Ներկայ տարիին սկսեսց Երեց Կարգին Հայերէնը կամաւոր է 4  
ԳԱՂՂԻՆԵՐԷՆ. — Լատեռի և Կրանժանի Բայի Ուսումը, Վիճէի  
Ծաղկաքաղին Բ. մասը 4  
ՈՒՍՈՂՈՒԹԻԻՆ. — Բարձրագոյն ընթացք 4  
ԴԻՏԱԿԱՆ. — Տարրականութիւն ժամանակակից Պատմու-  
թիւն (անգլիերէն 2. Տրամաբանութիւն 2

**ԵՐԷՅԱԳՈՅՆ (Senior) ԿԱՐԳ**

- ՀԱՅՅԵՐԷՆ. — Պատմութիւն Մատենագրութեան, Ազգային  
Պատմութիւն (բարձրագոյն ընթացք) 4  
Ներկայ տարիին սկսեսց Երեցագոյն Կարգի Հայերէնը կա-  
ւաւոր է 1  
ԴԻՏԱԿԱՆ. — Աստեղագիտութիւն, Հանքաբանութիւն, Երկ-  
րաբանութիւն, Բնաբանութիւն և Կենդանաբանութիւն,  
Քաղաք. Տնտեսութիւն, Մեջազգային Օրէնք  
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ. — Հոգեբանութիւն, Պատմութիւն Իմաս-  
տասիրութեան  
ԳԱՂՂԻՆԵՐԷՆ. — Դասական և ժամանակակից հեղինակներ 3







ՄՄ Հայագիտական գրադարան



MAL009336

